Գիտնալու համար, թէ ուր կ'աւարտի Փրովանսը, եւ ուր կը սկսի աշխարհին նուազ սիրելի մասը, կ'արժէ երթալ Աւինիոն՝ կոնկիլ եւ վայելուչ քաղաք մը, ուր կը գերիշխէ Պապերուն Պապարը: Այս կողմից իր կատարները 1309-էն 1377 ծառայած է իրեն հռոմէական կաթողիկոսութեան նստավայր, երբ ծագումով ֆրանսացի Քլեմէն Ե- պապը լքած է Հռոմը եկեղեցական հատուածականութեան ժամանակներուն:

Նոյնիսկ Աւինիոն դարաւոր համալսարանին (հիմնուած է 1303-ին) աշխարհագրութեան դասախօսները կը վարանին սահմանագծելու Փրովանսը: Անոնք կը բացատրեն, թէ Փրովանսը իտալական ղուրս հռոմէական առաջին գաւառը եղած է, ուրկէ ստացած է իր անունը: Սկիզբը տարածուած է Ֆրանսայի հարաւային ամբողջ տարածքին վրայ, Ալպեան լեռներէն մինչեւ Փարիսէն լեռնաշղթան: Սակայն Հռոմի անկումէն ետք տարբեր ուժեր փորձած են տիրել անոր. ֆրանքները, հաղարաքները (սարմալի) եւ աւա-

ՆԵՏԵԱՐԸ ԵՒ ՆԵՐԿԵՒ
ՄԻՋՈՒՆԻՒՄԸ

Սակայն եթէ դարեւ տաւալապաշտ Փրովանսի կտակած է խառնափնթոր ուրուագիծ մը, միւս կողմէ, առնուազն անոր շնորհած է անցեալի հարուստ գիտակցութիւնը: Գրեթէ ամէն տեղ կարելի է ակնատես ըլլալ անցեալի եւ ներկայի ներդաշնակ միաձուլումին: Օրաժամ ամփոփատուն քարէ նստարաններուն վրայ նրստած կարելի է օգիւրա դիտել: Արլի Փլուս տիւ Պորիւս սրճարանին մէջ կարելի է գաւաթ մը սուրճի շուրջ վայելել այնպիսի հրաշալի տեսարան մը, որ գրեթէ անփոփոխ մնացած է այն օրէն, երբ մէկ դար առաջ հոլանտացի վան Կոխը գեղանկարած է զայն: Կարելի է նաեւ ճեմով սալալատակ ծառուղիներէն եւ ուղղուել համերգ մը ունկնդրելու դաշտի մը մէջ, ուր չուրջ 2000 տարի առաջ սուհաբաւարտիկներ կը մարտնչէին, երբ Ալըր հռոմէական կայսրութեան յառաջող ժաղաքներէն էր:

Շրջանին յաճախ արիւնայի պատմութեան ամէնէն ցայտուն յիշեցումները հաւանաբար հրաշագեղ բլուրներուն տեսարժան գիւղերն են, ինչպէս՝ Լ.Լ. Պոս, Սոր, Պոնտ, Ռոնսլոն, Մեմիսլո եւ Սուրբիլ. Սուր Մարի, որոնք կը տիրապետեն կեցողութեան եւ հիւսիսային Փրովանսի գաւաթի թափ բլուրներուն: Միջնադարուն, երբ տեղային մեծաւորները պատերազմներ կը մղէին հարաւային Ֆրանսայի տարածքին, այս գիւղերը կը կառուցէին պաշտպանական եւ ապահովական



ՓՈՋՐ ԼՈՒՍԸ ԿԱՄ ԱՐԼ քաղաքը, Ռոն գետին վրայ, հիմնուած է Ն. Զ. 6րդ դարուն: Առաջին դարուն հռոմէացիք հոն կառուցած են 25 հազար մատարաններով ամփոփատուող մը, ուր սուհաբաւարտիկներ կը մարտնչէին, իսկ այսօր ցլամարտեր տեղի կ'ունենան:

նպատակներով: Դիտապտոյտ պատճառող գահալէժ անդունդներու եզրին, ամէնէն անհաստատ գետիներու վրայ, խիտ կերպով խռնուած եւ իրարու փարած այս գիւղերը յաւիտեան ձրգտած են հեռու պահել արտաքին աշխարհը: Դարեր շարունակ յաջողած են: Սակայն 1960ական տարիներէն ի վեր հետզհետէ կը նուաճուին նոր տեսակի ներխուժողներով, որոնք նուազ վայրաք են, բայց՝ աւելի անխնայ. գրոսաշրջիկներու «բանակներ» երբեմն պատկերազարդ բացիկներ գնելու տենդով (կը գրաւեն) ամբողջ շուկայ մը, մինչ գիւղացիք կը ստուպուին երկար սպասել իրենց անհրաժեշտ մէկ ապրանքը ձեռք գցելու համար:

Այսուհանդերձ, գրոսաշրջիկութեան եղանակէն դուրս Փրովանսի մեծ մասը կ'ընկղմի անխրուով անդորութեան մէջ: Խաղաղութիւնը հայր կու տայ ամէն Սեպտեմբերի, երբ տեղացիք դարձեալ կը սկսին իրարու հանդիպիլ փողոցներուն մէջ, խօսակցիլ սրճարաններու սեղաններուն շուրջ եւ իրենց գոյութիւնը վերգգալ իրեն հաւաքականութիւն:

Այդ ժամանակ ամառուան հեղձուցիչ տաքը եւս անհետացած է՝ ըլլալ, եւ ընտելութիւն «կը հագնի» ոսկեայ քնքշութեամբ գոյն մը: Եթէ հարց տրուի փրովանսցիին, թէ ի նշը ցինք կը կապէ Ֆրանսայի այս գաղտնի վայրին, նա իր ընտրող ազնութեամբ եւ համբարութեամբ կը պատասխանէ. «Որովհետեւ հոս ճիւղ իմ եւ տախտի իմ հոգի է, որովհետեւ Փրովանսն է, եւ որովհետեւ մնացեալ բոլոր վայրերը Փրովանս չեն»:

ԲՈՅՐԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԻԸ



ՓԵՐԹ ԱՐ ՓԵՐԹ - իտալացի աշխատաւորներ կը հաւաքեն ֆրանսական անուշահոտերու բոյր հայթայթող յամիկներ:

Փրովանսի բնակիչները միշտ ալ յաջողած են հաճելու եւ բարօրութիւն ստեղծել գրեթէ ոչինչէն: Ֆրանսայի այլ շրջաններէն մշակ մը սրտաճաք պիտի ըլլար հարաւային Ֆրանսայի այս անցողի տարածութեամբ մէջ: Սակայն տոկուն փրովանսցիին ձեռքերը արդիւնաբերական դրախտի կը վերածեն գայն, հայթայթելով հասնու գետնասուկերու (թրաֆլը) դէզեր, քաղցր կեռասներ, հիւթեղ սեխեր, պարարտ ծիրապտուղներու տեսակներ, պրտիդահմ գինիներ, շողշողափայլ խեցեղէն եւ զգլիլի անուշահոտեր:

Իրօք, անուշահոտերու պատրաստութիւնը կ'ապացուցէ բնութեան պարգէները՝ առաւելագոյն չափով օգտագործելու շնորհը: Անկիւք 400 տարիէ ի վեր Ֆրանսայի անուշահոտի տնտեսութիւնը կեդրոնացած է փոքր ու եռուկ Կրաս քաղաքին մէջ, որ թառած է միջերկրականեան Անթիպ, ժամ-Լեփին եւ Զան ծովագերան շրջաններէն քան մը քիլոմետր դէպի Ֆրանսայի խորը տարածուող մառախլապատ բլուրներուն վրայ: Թէեւ Կրասը երկար ժամանակէ ի վեր առնուած է առաջնակարգ անուշահոտերու արտադրութեան, այսուհանդերձ տնտեսութեան եկամուտը առաւելաբար հիմնուած է բուրմնաւետ համեմներու արտադրութեան վրայ: Անոնք կը գործածուին գրեթէ ամէն ինչի մէջ՝ սկսեալ ճաշերէն, մինչեւ օճառներու, կօշիկի ներկերու եւ ծխախոտի պատրաստութեան մէջ: Այս բոյրերուն համար իբրեւ հում նիւթ կը ծառայեն վարդի, լասմիկի եւ հուսամի (լաւենդը) փերթեր, ինչպէս նաեւ՝ կաղնիի վրայ գոյացած մամուռ, ծովախոտ եւ փայլի տաշեղ:

Փրովանսի մէջ հռչակաւոր են անուշահոտի «քիթ» ունեցող վարպետները, որոնք կրնան գատորոշել աւելի քան 700 բոյրերէն կրնան գանձել յիշել տարիներ շարունակ: Նման վարպետներ անուշահոտերու բաղադրութիւններ կը ստեղծեն իրենց երեւակայութեամբ մէջ եւ կ'ըսեն, թէ իրենց արհեստին գաղտնիքը «հոգիով օժտուած բոյր մը» երեւակայելու մէջ է:

ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՆԵՐՇԵԶԱՐԱՆԸ



Փրովանսի հարուստ բերք ու թիւերը ներշնչած է բազմաթիւ գեղանկարիչներ, ինչպէս՝ Մաթիս, Ռոնուար, Փիքասո, Պոնտ, Եւ Շակալ: Փօլ Սեզան շրջանին բերքն արուեստագէտը մեծ տեղ մեծցած եւ ապրած է Այի մէջ: Անոր արուեստանոցը այժմ թաքնուած է բարձր շէնքերու արանքին, մինչ հորը գլխարկաւճառի խանութին գեղանկարուած ծանուցումը մինչեւ այսօր կարելի է տեսնել Զուտ Միլապոյի սրճարաններէն մէկուն մէջ:

Սակայն ոչ թէ փրովանսցի, ոչ իսկ ֆրանսացի գեղանկարիչ մըն է, որ կը գերազանցէ «փրովանսայ» արուեստի աշխարհին առնչուող բոլոր արուեստագէտները: Անոնք խօսքը կը վերաբերի հոլանտացի տպաւորապաշտ գեղանկարիչ Վիսքոնք Վան Կոխի: Անոր արգասիքը այնքան բնորոշ եւ շլացուցիչ է, որ մարդիկ յաճախ կը մոռնան թէ ան գեղանկարած է միայն 10 տեղէն իր մեծագոյն իրագործումները կատարած է Փրովանսի մէջ ապրած 2 տարիներուն, 1888ի սկիզբէն մինչեւ 1890ի գարնանը, սկիզբը Արլի մէջ, ապա՝ հոգեբուժարանի մը, որ նախկին վանք մըն էր, Սէն Ռեմի Տը Փրովանսի հին գիւղաւանին մօտ: Վան Կոխ այս շրջանին խելաւոր թափով արտադրած է շուրջ 150 գեղանկար, որոնց 2-րդըն՝ «Նոճիով եւ աստղով ճամբայ» եւ «Չիթապտուղի ծառեր» դեղին երկինքով ու արեւով՝ գեղանկարներուն մնացածը անհայտ: Անոնց անհանգիստ եւ ահեկիթեղ խռովայնոյ գիծերը կ'արտացոլեն Վան Կոխի մտային խռնակները վիճակը, ինչպէս նաեւ՝ անգուր փոթորիկի մը գագաղթը: Հոգեբուժարանէն հեռանալէ երկու ամիս ետք Վան Կոխ անհասկալի եղած է 37 տարեկանին:

Հոլանտացի այս գեղանկարիչը հմայւած էր Փրովանսի գոյներով ու լոյսով եւ, զարմանալիօրէն, անոր միջերկրականեան հիւսիսային փոթորիկով: 1888ի բարեկամի մը յղած նամակին մէջ բացատրած է, թէ ինչպէ՛ս գեղանկարած է «Ամրան Գիշերը» գեղանկարը, նման կատաղի փոթորիկի մը մէջ. «Մարդ պէտք է եռոտանցի մը յարձ գտնուի եւ 50 սմ. բարձրութեամբ երկաթէ ձողեր խրէ անոր ոտքերուն շուրջ, ապա ամբողջութեամբ գայն կապէ պարանով: Այս ձեռով կրնան աշխատիլ, երբ հովը կը փչէ»:

ՍՈՐՎԷ՝ ԱՆԳԼԵՐԵՆ ԵՒ ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐ
POLYGLOT
ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ
ՏՈՐԱ, ՀԵՌ. 881452 ԵՒ 894923

USi
AIR & SEA FREIGHT
PACKING — TRAVEL — INSURANCE
UNITED SERVICES INTERNATIONAL SARL.
NACCACHE STREET — CHARTOUMI BLDG
TEL 350550/1/2/3 — 341150/51— 342800
P.O.BOX 11 4335 — BEIRUT — LEBANON
CABLE LOSHSEV — TELEX 20949 LE

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ
ԳՈՅԵՐՈՒ
ԱՊԱՆԿԱԳԻՄԸ
ՇՐԱՐՈՒՄ ԵՒ
ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ,
ԴԷՊՈ ԱՇԽԱՐՀԻ
ԲՈԼՈՐ ԿՈՐՄԵՐԸ,
ՈՆԶՈՒՄ ՆԱԵՐ
ՕՊԱՆԱԴՅՈՒՆ
ՏՈՄՍԵՐ



Մարզական



Մարզական



«ԱՆՅԱՐՈՅ» ԲԱԺԱԳԻ ՄՐՅԱԸՆԴՐ

— Հ.Մ.Բ.Մ. 2-0 ԱՐԳԻՆԵՐՈՎ — — 3ԱՂԹԵՅ ԱՆՍԱՐԻՆ —

Երէկ, Թրիփոլիի Քաղաքացետարանի դաշտին վրայ, Հ.Մ.Բ.Մ.-ի ֆուտբոլի շերտայնացուցչական խումբը «Անյարոյ» բաժանիկի գծով մրցում մրկատարեց Լիրանանի Խոյնեան եւ րաժակակր Անսարի դէմ եւ 2-0 արդիւնքով համոզիչ պարտութեան մը մատնեց զայն:

Պէտք է ըսել, որ Հ.Մ.Բ.Մ.-ի մարզիչին որդեգրած խաղաձեւը իրարողիւնը տուաւ: Արդարեւ, Հ.Մ.Բ.Մ.-ի տղաքը, Ա. Կիսախաղին յոգնեցնելէ ետք մրցակիցը, Բ. Կիսախաղին սկսան յուրջ յարձակումներու: Այդ կիսախաղին կը, որ Հ.Մ.Բ.Մ. նշանակեց իր 2 կորերը:

Հ.Մ.Բ.Մ., որ Թատաժոն Սուրի դէմ մրցող կազմով դաշտ ներկայացած էր, երէկ գեղեցիկ կոլեր նշանակեց շնորհիւ Վարդան Ղազարեանի, որ իր առաջին մրցումի չարախտը ջնջեց:

Ինչպէ՛ս ընթացաւ մրցումը:

Հագիւ մէկուէկէս վայրկեան անցած, Ստեփան Պաղտատարեան փտանգեց Անսարի բերդը:

19րդ վայրկեանին, Ալի Քալճաի հարուածը դպաւ Հ.Մ.Բ.Մ.-ի բերդին հորիզոնական սիւնին, եւ գետին դպնալէ ետք հասաւ Սագոյի ձեռքերուն:

Բ. Կիսախաղի 2րդ վայրկեանին, Դրոյի դէմ իրաւարար օֆ-սայտ տուլեց, թէ եւ ան օֆ-սայտ չէր:

Դրոյի արձակած լոյսն ալ րարձր էր...

60րդ վայրկեանին, Սամուէլ գնդակը գողցաւ մրցակիցէ մը եւ տուաւ Վարդանին, որ յառաջանալէ ետք, 25 մեթրէն ուժարային հարուածով մը խորտակեց Անսարի բերդը:

63րդ վայրկեանին, Դրո

գնդակը ստանալէ ետք, գլուխով դէպի բերդ ուղղեց զայն, բայց անոր հարուածը զսպուեցաւ բերդապահին կողմէ:

Քանի մը վայրկեան ետք, Ստեփան փոխանցում մրկատարեց Վարդանի, որ ձախ ոտքով օվըր մը կատարեց Դրոյին, որուն փլոնով հարուածը դպաւ Անսարի բերդի ուղեւանին, բայց... դուրսի կողմէն:

70րդ վայրկեանին, Ժամայ Թահա գլխու գորաւոր հարուած մը տուաւ, որ դպնալէ ետք Հ.Մ.Բ.Մ.-ի բերդի հորիզոնական սիւնին դուրս ելաւ:

75րդ վայրկեանին, Ան

դո Թորոսեան գնդակը մըրցակիցէ մը խլեց, երկար փոխանցում մը կատարեց Վարդանին, որ սպասեց որ Դրո օֆ-սայտի դիրքէն դուրս գայ, յետոյ 1-2 մը րորաւ անոր հետ եւ խաբելէ ետք Սուրիի Հիւսէյնը, նշանակեց Հ.Մ.Բ.Մ.-ի 2րդ կոլը:

83րդ վայրկեանին Բաֆֆի փոխանցեց Դրոյին, որ իր կարգին գայն անցուց դէպի աջ վարդանին: Վերջինը խաղի բերելէ ետք մըրցակից մը, գնդակը փոխանցեց Վալէի, որուն ուժարային հարուածը զսպուեցաւ Անսարի... սիւնին կողմէ:

89րդ վայրկեանին, եղիպտացի իրաւարար Քատրի Ապտէլ Ագիմ փեւսլի մը «նոսրեց» Անսարի, երբ Ֆատի Ալլուշ գնդակով մեծ քառակուսիի գիծին վրայ կ'ուղղուէր դէպի դաշտին ձախ կողմը, սակայն նախընտրեց գետին ինչալ... Արթիւրէն աւելի քան մէկ մեթր հեռու:

Յամենայնդէպ Սագո վարպետը զսպեց Ապտէլ Ֆաթիւն Շեհապի տուաւ հարուածը:

Վայրկեան մը ետք, Սագո անգամ մը եւս գնդակը խլեց առանձնացած Ալլուշի առջեւէն:

91րդ վայրկեանին, Դրո գաշտին կեղծումէն յառաջացաւ եւ 3 մրցակիցներ խաղի բերելէ ետք, ուժարային հարուած մը արձակեց: Բերդապահ Քանթ դժուարութեամբ զսպեց հարուածը:

92րդ վայրկեանին, Բաֆֆի ուժարային հարուածը (ձախ կողմէն) քողովը հանուեցաւ բերդապահին կողմէ:

Կրնանք ըսել, որ Հ.Մ.Բ.Մ. երէկ շատ աւելի լաւ մրցում մը կատարեց, քան Թատաժոն Սուրիի դէմ մրցումը: Դրո, Վարդան, Բաֆֆի, Ստեփան, Վալէ, Սամուէլ եւ Արթիւր, ինչպէս նաեւ Սագո շատ լաւ խաղարկութեան ունեցան: Միւս մարզիկները նուազ գոհացուցիչ չէին:

Այժմ Հ.Մ.Բ.Մ. իր խմբակին մէջ 2 մրցումներն ալ չաճած է:

Կիսաւարտականին, Հ.Մ.Բ.Մ. պիտի մրցի Սագո - Նորմէ - Պրոֆ խմբակի անդամներէն մէկուն դէմ:

Շարաֆ օր, Նորմէ 2-0 արդիւնքով յաղթեց Պրոֆի, անմակարդակ մրցումի մը: Պրոֆ - Սագո արտուաւ մրցումը պիտի վճռէ Ախմարային ճակատագիրը, իսկ Թատաժոն Սուրի - Անսար վաղուան մրցումը պիտի ճշդէ, թէ Բ. խմբակի Բ. գնդակով մեծ քառակուսիի գիծին վրայ կ'ուղղուէր դէպի դաշտին ձախ կողմը, սակայն նախընտրեց գետին ինչալ... Արթիւրէն աւելի քան մէկ մեթր հեռու:

Յամենայնդէպ Սագո վարպետը զսպեց Ապտէլ Ֆաթիւն Շեհապի տուաւ հարուածը:

Հ.Մ.Բ.Մ. - Սագո - Անդո Թ. - Արթիւր, Ստեփան, Անդո Պ. - Արա, Վալէ, Սամուէլ, Բաֆֆի - Դրո եւ Վարդան:

ԱՆՍԱՐ - Ուսամ Քանթ - Պիլալ Ջադուր, Սուրիի Հիւսէյն, Գէորգ Կարապետեան (նախապէս Հ.Մ.Մ. չէ), Խրոյ Պրոֆ-Ժամուի - Սելիմ Համզէ, Ժամայ Թահա, Ալի Քալճաի (ապա՝ Օմար Լտրպի) - Էմանուէլ Իպոյա (ապա՝ Ֆատի Հալլաք), Ալի Սուլաւա (ապա՝ Ֆատի Ալլուշ) եւ Ապտէլ Ֆաթիւն Շեհապ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԸ

● Տիկին Արտեմիս Իսկէտէրեան Եւ Խաչիկեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոց, որոնք անձամբ, նուիրատուութեամբ, ծաղկեպսակով եւ ցաւակցազիրով մասնակից եղան իրենց ամուսնոյն եւ եղբոր՝ ՅԱԿՈԲ ԻՍԿԵՆՏԵՐԵԱՆԻ մահուան սուգին:

ԿԸ ՆՈՒՐԻՆ

● Վագգէն Էթիմէգեանի մահուան առիթով, տիկին Սելա Թճճուկեան 50 ամ. տոլար՝ Համագայինի Կեդրոնական Վարչութեան:



TATEOSSIAN TRADING CO.
(TTC - Lebanon)
SAIFI - CENTRE KEKAYAN
TEL: 01/449667 - 448848 - FAX: 01 449667
ROND POINT DORA
TEL: 03/661809

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

- ԼԻՎԵՐՓՈՒԼ ՇԱՍՏԱՏ ՄԱՅ Ա. ԴԻՐԵԻՆ ՎՐԱՅ
- ՊԱՅԵՐՆ ՎԵՐՍՏԻՆ ԱՌԱՋԻՆ
- ՓԱՐՄԱ Ա. ԴԻՐԵԻ ՎՐԱՅ

ԱՆԳԼԻԱ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 7րդ հանգրուանին, արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները:-

Լիվերքուլ - Չելսի	5-1
Ասթոն Վիլա - Մանչեսթըր Յունայթըտ	0-0
Պլեյքլըն - Էվերթըն	1-1
Լիօ - Նիքթալ	0-1
Միտլդլու - Արսենալ	0-2
Նոթիքլեմ - Ֆորթս	0-2
Ուեսթ Համ - Շեֆիլդ Ուեզթ	0-0
Սանտըրլէն - Քովենթրի	1-0
Թոթեմհամ - Լալսթըր	1-2

ԳԵՐՄԱՆԻԱ

Պայլեր Լեւեքքուլըն - Ֆրայուրկ	5-3
Պոլոն - Համպուրկ	3-1
Ջանք Գաուլի - Ֆ. Բ. Բեռլին	1-0
Մեոն Զընկլա տուալի - Տորթմունտ	5-1
Տորթմունտ - Ֆորթս	0-2
Արմինիա Պիլիֆիլտ - Շալք	0-1
Պայլեր Միլենի - Քարլսրուհե	1-0

ՅՈՒՆԱՆԿԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐԶԱՆԻԿ ՏԵՐ Տ. ՅՈՒՆԱՆԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԸ. ԴԱՄԱՐԵԱՆ (Կաթողիկոս Պատրիարք Կաթողիկէ Հայոց) Հայրապետական Սուրբ Պատարագը պիտի մատուցանէ Երջակայի շատակ ԿԱՐԴ. ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ.

ԱՂԱՃԱՆԵԱՆ ԿԱՌՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԵՒ ՇՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՐԱՍԵԱԿԻՆ ԱՌԹՈՎ Կիրակի, 29 Սեպտեմբեր 1996, առաւօտեան ժամը 11ին, Սուրբ Գրիգոր Սուրբ Եղիա աթոռանիստ եկեղեցւոյ մէջ:

Յաւարտ Սուրբ Պատարագի պաշտօնական բացումը, պիտի կատարուի Երջակայի շատակ Հայրապետին կիսանդրին եկեղեցւոյ գաւթին մէջ:

ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ԴԵՍԱՐԱՆ ԶԻՍՈՒՍԵԱՆ ՀԱՅՐԵՐՈՒ ԷՇՐԵՅԻԸ 1996-1997 (74ԴԻ ՏԱՐԵՐԶԱՆ)

1. Արձանագրութիւններ կը շարունակուին ամէն օր. բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, առաւօտեան ժամը՝ 8.30էն 12.30:
2. Վերամուտը՝ Երեքշաբթի, 1 Հոկտեմբեր 1996ին:
3. Գրեական պիտոյքները ապահովել արձանագրութեան օրերը:
4. Վերաքննելի աշակերտներուն քննութեանց օրը որոշուած է Հինգշաբթի, 26 Սեպտեմբերին 1996, առաւօտեան ժամը 8ին 12:
5. Օրոքարի սպասարկութիւնը ապահովուած է:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Institut Technique d'Al - Kafaât

«Բաֆաաթ» թեքնիք ուսուցման հիմնարկը այսու կը յայտնէ, թէ կը շարունակէ աշակերտներու արձանագրութիւնը հետեւեալ մասնագիտական մարպերուն մէջ. պանդոկային գիտելիքներ, արհեստներ, գրասենեկային, վարչական, շինարարական, արուեստի եւ համակարգչային: Հիմնարկին աշխատանքներուն մասնակից է արհեստիք թեքնիք գիտութեանց նախարարութիւնը, պատրաստելու համար Բ.Տ եւ Դ.Տ. վկայականներուն, ինչպէս նաեւ աշխատանքի նախարարութիւնը (Ազգային Պաշտօնի Հիմնարկ) մարպումի դասընթացներուն: Հիմնարկին մէջ կեցութիւնը ապահովուած է:

- Փոխադրամիջոց՝ ապահովուած:
- Սահմանափակ տեղեր՝ ընկերային հարցերու նախարարութեան հաշտոյն կեցութեան եւ ուսանելու համար:



Լ.Օ.ԽԱԶԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Լ.Օ.Խաչի բոլոր մասնաճիւղերու կրթական արձանագրութիւնները՝ 1996-1997 տարեշրջանին համար, (Մասնակաւարտէյ եւ Նախակրթարան) տեղի պիտի ունենան Լ.Օ.Խաչի մասնաճիւղերու կեդրոններուն մէջ. Հոկտեմբեր 1էն 10, ամէն օր, առաւօտեան ժամը 9էն 12:

Լ.Օ.ԽԱԶԻ
ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Բ.Մ. - ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Բ.Մ.-ի Պուրճ Համուտի Սկանտական խմբապետական խորհուրդին կազմակերպած վիճակահանութեան վիճակագրութիւնը տեղի ունեցաւ եւ բախտաւոր թիւերն են 221 A. B. C.

ՍԿԱՆՏԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅ ԱՒԵՏ. ԵՐԿՐՈՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆ - ԱՅՆՃԱՐ

Հեռ. (08) 801727

1996-97 տարեշրջանի արձանագրութիւնները տեղի պիտի ունենան հետեւեալ ձեւով:

2 Նոյեմբերի, 25 Սեպտեմբերէ մինչեւ Երկուշաբթի, 30 Սեպտեմբեր 1996, ժամը 9էն 3, ոչ-գիշերօթիկ աշակերտներու համար:

Երեքշաբթի, 1 Հոկտեմբեր եւ 2 Նոյեմբեր, 2 Հոկտեմբեր 1996, ժամը 9էն 1 եւ 2էն 4, գիշերօթիկ աշակերտներու համար:

Վերամուտ՝ Հինգշաբթի, 3 Հոկտեմբեր 1996:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

4. Ֆ. Բ. Բեռլին	13 (11-7)	Փերուհիա - Եուլիենուս	1-2
5. Տորթմունտ	13 (15-12)	Վիչենցա - Աթալանթա	4-1
		Ինթեր Միլան - Լացիո Թումա	1-1
		Փարմա - Ռեցիանա	3-2
		Ա. Էս. Թումա - Սաւոնոնա	1-4
		ԳԱՍԱՌՈՐՈՒՄ ԿԷՏ	
		1. Փարմա	7 (6-2)
		2. Եուլիենուս	7 (5-3)
		3. Ինթեր Միլան	7 (3-1)
		4. Վիչենցա	6 (8-5)
		5. Ա. Ա. Միլան	6 (7-4)

ԱՄԱՌԱՅԻՆ ԲԱՅՈԹԵԱՅ ԵՐԳԱՀԱՆԳԵՍ

Կապակերպութեամբ Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Ժողովրդապետութեան, Ելոյթ կ'ունենայ իր նոր երգերով Հանրաժամանօք երգիչ

ԱՆԹՈՒԱՆ ՊԷՋՃԵԱՆ

Ընկերակցութեամբ ԽԶԻԿԻ ՄԱԽԻՄԵԱՆԻ եւ իր նուագախումբին

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 27 Սեպտեմբեր 1996ին, Երեկոյեան ժամը 8.30ին, Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանի բակին մէջ, Պուրճ Համուտ:

ՍԱԿ՝ 8000 Լ.Ո.

● Տոմսեր կը վաճառուին տիսքոթէք ձեւա՝ Պուրճ Համուտ, տիսքոթէք Ժուլիէ Գրիգորեան՝ Պուրճ Համուտ, Սթիւտիօ Նաիրի՝ պողոտայ, ծաղկավաճառ Պուրճ Համուտ, սթիւտիօ Յարութ՝ Պուրճ Համուտ, տիսքոթէք Տիսքո Եանի՝ Մարաշ, Տ. Մեքրնեան սրահի փողոց:

ՄԱՀԱԶԴ

Տէր Բարգիւն Աւագ քհն. Քենտրիճեան եւ երկուսին Վահան, Անի, Բաֆֆի եւ Սեւակ Քենտրիճեաններ Տէր եւ տիկին Վրէժ Քենտրիճեան Տիկին Սայրի Չիլիկիւրեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Փանոս Մանճեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Ջարեհ Քենտրիճեան եւ գաւակուէք եւ համայն ազգականներ կը գովեն իրենց գաւկին, եղբոր եւ հարազատին՝

ՃՈՐՃԻԿ ՔԵՆՏԻՐՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Այնճար, 1957ին)

Մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 20 Սեպտեմբերին, Թորոնթոյի (Քանատա) մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 24 Սեպտեմբեր, կէսօրուան ժամը 12ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

● Ներկայա ընդունիլ իրեն մահազոյ:

ՄԱՐԻ ԿԱՐՊՈՒՇԵԱՆԻ (Ծնեալ՝ ԽՈՒՐԻ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 22 Սեպտեմբերին 1996, առաւօտեան ժամը 1ին, սրտի կաթնուածի հետեւանքով:

Թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ այսօր՝ Երկուշաբթի, 23 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 1ին, Հայաշէնի Ս. Յովհաննէս - Կարապետ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրոն Զրպէլի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայա ընդունիլ իրեն մահազոյ:

● Յուղարկութիւններ կ'ընդունին հանգուցեալին բնակարանը, Էշրէֆի, Երեքշաբթի 24 եւ Զոյնքաբթի 25 Հոկտեմբերին:

ԶԻԼԷՐ ԵՏԳԱՐԶ Կ'ԸՆԵ ՄԵԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵՆԷՆ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Թանսու Զիլէր երէկ հերքեց, թէ Անգարա կող ուղղած է Պաղտա-տի, որպէսզի իր իշխանութիւնը վերահաստատէ Հիւսիս-սալին Իրաքի վրայ եւ ճգմէ հոն հաստատուած անջատո-ղական «քրտական ծագումով թուրքերը»: Ան կը հա-կազդէր «Նիւ Եորք Թալմզ»ի այս իմաստով մէկ լու-րին:

Զիլէր հաղորդագրութեամբ մը հաւաստեց, թէ Թուրքիա նման առաջարկ չէ կատարած եւ դիտել տուաւ, որ անկա կը նախընտրէ, որ Մասուտ Պարգանլի ուժե-րը այդ շրջանէն հեռացնեն ահաբեկիչները: «Թուրքիա պատրաստ է անոր օժանդակելու», լրատւ ան:

«Նիւ Եորք Թալմզ» օրաթերթը Շարաթ օր յոյս ընծայած էր Զիլէրի հետ կատարուած հարցազրոյց մը, ուր ան կը յայտնէր, թէ Թուրքիա պիտի հրաժարի Իրա-քի հիւսիսը «ապահովութեան գօտի» մը ստեղծելու իր ծրագիրէն, եթէ նախագահ Սատտամ Հիւսէյն որոշ քա-յերու դիմէ, ճգմելու համար Անգարայի դէմ պատե-րագմ մղող քիւրտերը: «Նիւ Եորք Թալմզ» նկատել տուած էր, որ ամերիկացի պաշտօնատարներ գարմա-ցած են Զիլէրի խօսքերէն: Անկա մէջբերեց արտաքին գործոց նախարարութեան րարծրաստիճան մէկ պաշ-տօնատարր, որ ըսած է, թէ ասիկա Միացեալ Նահանգ-ներու եւ Թուրքիոյ միջեւ տեղի ունեցած բանակցու-թիւններուն համապատասխան չէ: «Թերեւս ասիկա Թուրքիոյ ձեւն է, Միացեալ Նահանգներու ցոյց տալու, որ փոխընտրանքներ ունի», յայտնած է ան:

(ՌԷՕԹԸՐ)

ՓԵՐՕ ԴՈՒՐՍ ԿԸ ԶԳՈՒԻ ԲԱՆԱՎԷԾԷՆ

ՈՒԱԾԻՆԿԹԸՆ, 21 (ՌԷՕԹԸՐ)՝ Նախագահ Պիլ Բլինթընի ներկայացուցիչները Շարաթ օր չյաջողեցան իրականացնել նախագահական բանավէճերու թեկնա-ծու Ռոս Փերոն մասնակից դարձնելու իրենց յոյսերը: Աւելի քան 9 ժամ տեւած բանակցութիւններէ ետք, Բլին-թընի եւ հանրապետական թեկնածու Պոպ Տոյի ներկա-յացուցիչները համաձայնած են կայացնել պատկե-րասփռուած 2 բանավէճեր, իւրաքանչիւրը՝ 90 վայր-կեան տեսողութեամբ՝ Տոյի եւ Բլինթընի միջեւ: Տոյ մերժած էր բեմը բաժնել Փերոյի հետ: Այլ բանավէճ մը տեղի պիտի ունենայ փոքր նախագահ Ալ Կորի եւ Տոյի հետ փոքր նախագահութեան թեկնածու Ճէյ Բէմփի միջեւ:

Փերոյի ընտրապայքարը կազմակերպողները այս որոշումը քննադատեցին:

ԻՏԱԼԻԱՅԷՆ ԳԱՂՏՆԻ ԶԷՆԸ ԴԷՊԻ ԻՐԱԸ ԵՒ ՊՈՍՆԻԱ

ՀՌՈՄ, 22 (ՌԷՕԹԸՐ)՝ Իտալիոյ մէջ կաշառակե-րութեան կապուած հսկայ գայթակղութիւն մը, որ նոյ-

նիսկ իտալացիները ցնցած է, Կիրակի օր աւելի՝ ծան-րակշիռ ընթացք ստացաւ այն յայտնաբերումներէ ետք, թէ պետական ընկերութիւններ կրնան ապօրինի կեր-պով գէնք ղրկած ըլլալ Պոսնիա եւ Իրաք:

Քննութիւնները շարաթ մը առաջ մեծ ցնցում յա-ռաջացուցած էին, երկաթուղագծերու պետական ըն-կերութեան տնօրէնին ձերբակալումէն ետք: Անոնք ի յայտ բերած էին առեւտրականներու, դատաւորներու եւ փաստաբաններու «գեր-խմբակ» մը, որ գործած է պետական բազմաթիւ մարզերու խողովակով:

ՊՈՍՆԻՈՅ ՄԷՋ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐՈՒ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ Ի ԶՕՐՈՒ

Պոսնիոյ տարածքին անցեալ Շարաթ օր տեղի ունեցած ընտրութիւննե-րէն շարաթ մը ետք, մրցա-կից կողմերը կը շարունա-կեն պատերազմի օրերու իրենց նպատակները հե-տապնդել՝ այլ միջոցներով:

Նորընտիր եռանդամ նախագահութեան սերպ եւ իսլամանդամներուն միջեւ տարակարծութիւնները ի յայտ եկան ընտրութեանց նախնական արդիւնքնե-րուն յայտարարումէն հա-ջիւ քանի մը ժամ ետք:

Մեկնարանները կը յայտ-նեն, թէ սերպ եւ խրուաթ ազգայնական դեկավար-

ներ, Սեպտեմբեր 14ի ընտ-րութիւններէն ետք կրնան իրենց ճառարաստութիւննե-րը նուազ ազդեցիկ ող դար-ձուցած ըլլալ, սակայն անոնք յանձնառու կը մնան Պոսնիոյ մէջ առան-ձին պետութիւններ ստեղ-ծելու գաղափարին:

Պէտք է նշել, որ սերպ եւ խրուաթ ազգայնականնե-րը գոյուցացած են միւսին հողամասերուն վրայ թեկ-նածուներ ունենալէ: Իս-լամ ազգայնական կուսակ-ցութիւնը նոյն կեցուածքը չէ որդեգրած: Ըստ խրու-աթ ընդդիմադիր դեկա-վարի մը, անոնք ընտրու-

ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐԸ ՄԵԾ ՅՈՅՍԵՐ ԶՈՒՆԻՆ

Բրիտանիոյ Յրդ մեծագոյն կուսակցութիւնը՝ Ագա-տական Ժողովրդավար Կուսակցութիւնը երէկ Պրայ-թըն քաղաքին մէջ բացումը կատարեց իր տարեկան համագումարին, որուն ընթացքին անոր անդամները պիտի պատրաստեն յառաջիկայ ընտրութիւններուն հա-մար իրենց ընտրապայքարը:

Եթէ ընդդիմադիր Աշխատաւորական եւ իշխող Պահ-պանողական կուսակցութիւնները կը յուսան յառաջի-կայ 2 շարաթներուն տեղի ունենալիք իրենց համագու-մարները իրեն խորխոր օգտագործել՝ յառաջիկայ Ապ-րիլին կամ Մայիսին յաղթանակ ապահովելու համար, ազատականները կը յուսան պարզապէս ազդեցութիւն մը ունենալ յառաջիկայ խորհրդարանին մէջ: Լաւագոյն պարագային, ազատականները կրնան 30% եւ 40 ամօռ ապահովել (55) ամօռ հաշուող խորհրդարանին մէջ:

Աշխատաւորական կուսակցութիւնը, ըստ հարցա-խոյզներու, կը պահէ Ա. դիրքը:

(ՌԷՕԹԸՐ)

ԾԱՆՐԱԿՇԻՌ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ ՓԱՔԻՍՏԱՆԻ ՄԷՋ

ԼԱՐՔԱՆԱ, 22 (ՌԷՕԹԸՐ)՝ Փաքիստանի մէջ ցու-ցարարներ Կիրակի օր բախում ունեցան ոստիկանու-թեան հետ, վարչապետ Պենազիր Պուլթոյի եղբոր Մուր-թագա Պուլթոյի ընկալարանին առջեւ, պատճառ դառ-նալով, որ նախագահ Ֆարուք Լեղարի չկարենայ ցա-ւակցական այցելութիւն տալ:

Ականատեսներ յայտնեցին, որ ցուցարարները հա-յածեցին ոստիկանները, երբ նախագահին ինքնաշարժը

կը փորձէր մօտենալ:

42 տարեկան Մուրթագա եւ վեց հետեւորդներ սպաննուեցան Ուրբաթ օր, Քարաչիի մէջ, ոստիկանու-թեան հետ բախումի մը ընթացքին: Մուրթագայի հետե-ւորդները կ'ամբաստանեն Պենագիրի ամուսինը, ըսե-լով, որ ան մեղսակցած է այս դաւին: Մուրթագայի կապերը Պենագիրի հետ սերտ չէին: Պենագիր ժառան-ցած էր հօր կուսակցութեան դեկավարութիւնը, իսկ Մուրթագա անկէ անջատուած թեւ մը կը դեկավարէր:

թեանց հարցով համաձայ-

նութիւն գոյացուցած էին: Ամերիկեան արտաքին գործոց նախարարութիւնը կը մերժէ ընդունիլ, թէ նա-խագահութեան մէջ համա-ձայնութիւններ կը գոյա-նան եւ կը հաւաստէ, որ 3 կողմերը իրենք գիրենք յանձնառու դարձուցած են միացեալ այդ մարմինին գոյատեւման:

ՕԹԱՆԵԱՆ ԺՈՂՈՎ

ՕԹԱՆի պաշտպանու-թեան նախարարները այս շարաթ Նորվեկիոյ մէջ ժո-ղով մը պիտի գումարեն, պաշտօնապէս առաջին ան-գամ ըլլալով արծարծելու համար Պոսնիոյ մէջ մնա-լիք ուժերուն հարցը, երբ խաղաղարար ուժերուն ներկայ առաքելութիւնը աւարտի (Դեկտեմբերի վերջերուն):

Արեւմտեան դաշնակից-ները կ'ընդունին, որ որոշ ուժ մը պէտք է մնայ որեւէ տագնապ կանխարգիւելու եւ Տէյթընի համաձայնու-թեան ժամանակ տալու հա-մար, որպէսզի արմատ նե-տէ:

Այս հարցը նուրբ է Մի-ացեալ Նահանգներու հա-մար, ուր Նոյեմբեր 5ին նա-խագահական ընտրու-թիւններ տեղի պիտի ունե-նան: Նախագահ Պիլ Բլին-թըն խոստացած է, որ ամե-րիկեան ուժերը Դեկտեմբե-րէն ետք Պոսնիա պիտի չմը-նան, իսկ Ուաշինկթընի եւ-րոպական գլխաւոր դաշ-նակիցները յստակ դար-ձուցած են, որ առանց ամե-րիկեան ուժերուն՝ իրենք պիտի չմնան Պոսնիոյ մէջ:

(ՌԷՕԹԸՐ)

ՍՈՒԶԱՆԱԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ

ՔԱՆԿՆԱԿ, 22 (ՌԷՕ-ԹԸՐ)՝ Հարաւային Քո-րէա թափանցած հիւսիսա-յին քորէական սուզանա-ւին հրամանատարը հա-յածուելէ ետք, Կիրակի օր սպաննուեցան լեւնային շրջանի մը մէջ, ապահովու-թեան ուժերուն հետ բա-խումի մը ընթացքին, յայտ-նեցին Հարաւային Քորէա-յի բանակին ադրիւրները:

Բախումին ընթացքին սպաննուած է նաեւ այլ հիւսիսցի մը եւ հարաւցի երկու գինուորներ, յայտ-նեց պաշտպանութեան նա-խարարութեան հաղոր-դագրութիւնը: Իսկ սուզա-նաւէն դուրս եկած այլ գին-ւորականի մը թաքստո-ցը գտնուած է եւ պաշար-ւած:

Սուզանաւին թափան-ցումի գործողութիւնը, որ սկսաւ հինգ օր առաջ, ցարդ 20 հիւսիսցիներու կեանքը արժած է:

ԵԼՅԻՆԻ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՌՈՒՄԻԱ՝ ԱՆՈՐՈՇ

ՄՈՍԿՈՒԱ, 22 (ՌԷՕԹԸՐ)՝ Ռուսիա շարաթակեր-ջին անորոշ վիճակի մատնուած է, սրտարան վիրաբոյժ Ռեմաթ Աքչուրիի այն յայտարարութենէն ետք, թէ նախագահ Պորիս Ելցին այս Յուլիսին կրնայ անցուցած ըլլալ Յրդ սրտի տագնապ մը, որուն մասին որեւէ տեղե-կութիւն չէր տրուած օրին: Բժիշկը նաեւ ըսած էր, թէ Ելցինի սրտի վիրաբուժական գործողութիւնը կրնայ վտանգել անոր կեանքը, նկատի առած անոր սրտին վիճակը:

Կրեմլին լուսթիւն պահեց վերոյիշեալ յայտարա-րութիւններուն մասին: Նոյնն էր կեցուածքը լրատու աղբիւրներուն:

Նախագահին բժիշկները այս շարաթ պիտի որոշեն, թէ Ելցին պէ տք է վիրաբուժական գործողութեան են-թարկուի եւ եթէ այո, Երբ եւ ինչպէ՛ս: Կ'ըսուի, թէ՛ վիրաբուժութիւնը կրնայ 2 ամիս ուշանայ:

Ռուս բժիշկները կը գոյուցանան առանձինն որո-շում տալէ: Անոնք օտար սրտարաններու, ներառեալ ամերիկացի վիրաբոյժ Մալքըլ Տապաքիի հետ պիտի խորհրդակցին, որոշում մը տալէ առաջ: Վիրաբուժու-թեան թուականը կը մնայ անորոշ եւ անորոշութեան կը մատնէ նաեւ քաղաքական վիճակը:

Ելցինի հաւանական յաջողուցները գործի լծուած են իշխանութեան հասնելու համար: Վարչապետ Վ.Բլթոր Զեւոմիրտին յաւելեալ պատասխանատուութիւններ ստանձնած է անցեալ շարաթ, Կրեմլինը յստակ դար-ձուց, որ ան առժամաբար նախագահական ամրողիչա-կան իշխանութեան բեռը պիտի վերցնէ, եթէ Ելցին գոր-ծողութեան ենթարկուի:

Իր կառավարութենէն դուրս, իր գլխաւոր մրցա-կիցներէն մէկը ապահովութեան պատասխանատու Ալեք-սանտը Լեպէտն է, որ գաղտնի չի պահեր նախագահու-թեան աթոռին հասնելու իր փափաքը:

Բանայի Յրդ անձնաւորութիւնը Ելցինի անձնակազ-մի պատասխանատու Անաթոյի Զուպայիսն է, թէ եւ քի-չեր 41 տարեկան ազատական տնտեսագէտը յուրջ մրո-ցակից մը կը նկատեն:

ՊԱՊԸ ԿՊԳԵԿՈՋԷ ՖՐԱՆՍԱՅԻ ՔԼՈՎԻՍ ԹԱԳԱՒՈՐԸ

ՌԷՆ, 22 (ՌԷՕԹԸՐ)՝ Յովհաննէս Պօղոս Բ. Պապը Կիրակի օր պատարագ մատուցեց մօտաւորապէս 200 հազար հաւատացեալներու առջեւ, որոնք հաւաքուած էին Ռէնի մօտակայ օդուժի խարխիսին մէջ՝ նշելու հա-մար 1500ամեակը Քրիստի մկրտութեան: Քրիստիս արեւմտեան եւրոպացի նորոյն թագաւորն է, որ ըն-դունած էր կաթողիկէ դառնալ:

Պապը, որ իր աւարտին կը հասցնէր Ֆրանսա չորս-օրեայ այցելութիւնը, իր քարոյզին մէջ դիտել տուաւ,

որ հեթանոս թագաւորին քրիստոնէութեան դարձը ան-կիւնադարձային դէպք մըն է Ֆրանսայի պատմութեան մէջ, որովհետեւ ատիկա կը խօսի Ֆրանսայի հոգիին մասին եւ կոչ է ուղղէ նորօրեայ կաթողիկէներուն, որ-պէսզի պահպանեն մկրտութեան խորհուրդը:

Պապին այցելութեան ընթացքին, ձախակողմեան-ներ կող ուղղած էին կաթողիկէներուն, որպէսզի իրենց մկրտութեան հաստատագիրները վերադարձնեն քահա-նաներուն, իրեւ բողոքի նշան:

ԼԵՆԸՆԻ ԹԱՔՐՈՒՆ ԳԻԾԵՐԷՆ

ԼՈՆՏՈՆ, 22 (ՌԷՕԹԸՐ)՝ «Պիքըլզ» խումբին նախ-կին անդամներէն ձուկ Լեքընի կողմէ գրուած նամակ-նէր, որոնք ամբողջ 20 տարի մ'ոռոցուած մ'ուցած են, ի յայտ բերած են Լեքընի նկարագիրին ցարդ անձանօք կողմերը. կը թուի, թէ ան ընտանեկան կեանքը կը սիրէր եւ իր առողջութեան հոգ կը տանէր: Լեքըն 1980ին Նիւ Եորքի մէջ տղանուած էր խեթաքած նամակի մը կողմէ:

Իր գարմուկի լէճիլայի յղուած շարք մը նամակ-ներու մէջ. Լեքըն գրած է իր գաւակին՝ ձիւլիլընի հանդէպ իր սիրույն, իր սննդականոնին մասին իր մտա-հոգութեանց եւ ետկալի իր առօրեայ մարգարէներուն մասին:

Նամակները գտած է Լէլլայի եղբայրը:

ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

ԹԵՆԸՐԱՆ.- Իրան երկւ ծոցի շրջանին մէջ սկսաւ ծովումի ռազմափորձե-րու, որոնք 5 օր պիտի տե-ւեն: ԻՐԱՆԻ լրատու գոր-ծակալութիւնը յայտնեց, թէ ռազմափորձերուն նպատակն է ցոյց տալ, որ զինուորները ծակատելու պատրաստ են Իրանի պաշտպանելու համար:

ՏԻԱՐՊԵՔԻՐ.- Հարաւ-

Speedway

BLANCO CENTER
Հեռ. 585545-268962

ՕՐՈՒՄՆ ԾԱՇԸ

●ԿԱՆԱԾ

●ԼԱԶԱՆԻԱ

●ԱԳՅԱՆ

արեւելեան Թուրքիոյ մէջ, վերջին 2 օրերուն, թրքա-կան ապահովութեան ու-ժեր 35 քիւրտ անջատողա-կաններ սպանած են բա-խումներու ընթացքին:

ՊԱՂՏԱՏ.- Իրաքեան մարդկային իրաւանց կազմակերպութիւն մը յանձնախումբ մը կազմու- է, փնտրելու համար 1990-91ին Էրմէյք ներխուժման եւ գրոտման օրերուն կորսը-ւած բոլորիցները: Ըստ Էրմէյքի, անկի քան 600 բոլորիցներ անհետացած են:

ԱՌԱՔՄԻԾ.- Ենթադ-րարար քորսիքացի անշա-տողականներ, Քորսիքայի տարածքին Յնամականու-նէր ականահարած են Շա-րաթ գիշեր: Մարդկային վնասներ չեն արձանագոր-ւած:

(ՌԷՕԹԸՐ)